

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար

Տարեկան ֆրբ. 10


վեցամսեայ " 5

Երրորդ համար

Տարեկան ֆրբ. 12

վեցամսեայ " 6

ԿԱՆՆԻՍԻՒ

Գրութիւնք համար 27
տրուիր:

Հասցէ

DIRAN PAPAŽIAN

RUE DRAGOMAN

K. STEPAN

BULGARIE) VARNA

ՇԱԲԱԹԱՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Եթէ կ'ոգնէք «Հայելի»ին մէջ աղոտ երեւնալ,

Պատրիս սիրուն եւ ազնիւ դէմք մը ունենալ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուլկարիոյ առաջնական ու երկրա-
գործական նախարարը՝ երաշտութենէն
նեղուող գիւղացիներուն օգնելու համար
հետեւեալ հրահանգները տուաւ երկրա-
գործական սնտուկներուն.

1. Անմիջապէս ստոյգ տեղեկութիւն-
ներ առնել վնասուած արտերուն վրայ:
2. Դրամ փոխ տալ երաշտութեան զո-
հերուն հաւաքական երաշխաւորութիւն-
ներ ստանալով, եւ ի հարկին անշարժ
կալուածներ աւանդ առնել եթէ փոխա-
ռուն անձնական վարկ չունենայ: 3. Թէ՛
անշարժ կալուած եւ թէ՛ անձնական վարկ
չունեցող այն արկածեալներուն որոնց
փոխատուութիւն ընել կարելի չըլլայ,
անոնց ցուցակը պատրաստել՝ պետու-
թեան գանձէն նպաստ խնդրելու
համար:

Որոշեց նաեւ Իտալիոյ մէջ հասնող
տեսակ մը եղիպտացորեն բերել տալով
սերմի համար բաժնել երաշտութենէն
վնասուող երկրագործներուն:

Երկրագործական սնտուկներու կեդ-
րոնական վարչութիւնը գաւառային օրն-

տուկներու դրամագլուխները աւելցու-
ցած է գիւղացիներուն փոխատուութիւն
ընելու համար թէ՛ անոնց ապրուստին
եւ թէ՛ սերմի յատուկ ցորեն գնելու նը-
պատակով:

— Սոպրանէի անցեալ չորեքշաբթի
օրուան նիստին մէջ հանրօգուտ շինու-
թեան նախարար Պ. Թոնչէյօ օրինագիծ
մը ներկայացուց, առաջարկելով դադ-
րեցնել Սարամպէյէն Զորբան եւ Քէօու-
թէնտիլէն մինչեւ սահմանագլուխ շին-
ուելու վրայ եղած երկաթուղիի գիծին
աշխատութիւնները, մինչեւ որ օտմ. կա-
ռավարութեան հետ պայմանագրութիւն
մը կնքուի, այս վերջին գիծը Եյրի Բա-
լանկա-Քումանովայի գիծին միացնելու
համար:

— Ֆիլիպէի կառավարիչ Պ. Կորսա-
նով հրաժարեւ եւ անոր յաջորդեր է
Շումնուի կառավարիչ Պ. Եուվան Տի-
միթրով:

— Սօֆիաէ կը հեռագրեն թէ Եւ-
մտական պայմանագրերը Սոպրանէի
մէջ քուէարկուեր է 48ի դէմ 77 ձայ-
նով: Ընդգիծադիր կուսակցութեան թեր-
թերը իրենց կրած պարտութեանց առ-
թիւ սե շրջանակներով հրատարակուե-
ր են:

ԱԶԳԱՅԻՆ



Պուլկարահայոց այցելու հովիւ Գեր.
Բարդուղիմէոս Մ. Վ. Պաղճեանի ջան-
քով, Ֆիլիպէի աղգայինք այս անգամ
ստուար մեծամասնութեամբ հետեւեալ
եօթը կարող անձնաւորութիւնները ի-
րենց Թաղ. Խորհուրդ ընտրած են.

Տեարք

Պետրոս Ասթարճեան

Առաքել Գաղաղեան

Խաչիկ Կտիբօֆ

Յովհաննէս Արամեան

” Գանթարեան

Գրիգոր Թամիրեանց

Յովհաննէս Գարակէօղեան



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Կրթարանի վիճակացոյց-
ներու բաշխման և մանկապարտէզի
հանդէսը տեղի պիտի ունենայ վաղը,
կիրակի, 4 | 16 յուլիս ժամը 2ին Ան-
կէլ Սլավօֆի սրահը:

Մասնաւոր հրաւիրագիր չընդունող-
ներէն կը խնդրուի իբր այն նկատել
ներկայ յայտարարութիւնը:

Վառնա

Հիմնադիր—Տնօրէն

3 Յուլիս 99

ԿՐՕՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ԲՈՒՐԴԷ ԳԱՆԿ ԹԵ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Քառակուսի դիրքով ու քառակուսի պա-
րունակութեամբ յայտարարութիւն մը ստա-
ցանք այս շաբթու Ռուսչուքէն, «ուսուցչա-
կան մարմին» ստորագրութեամբ: Այդ Թուղ-
թը մեզ կամբաստանէր որպէս «անլուր եւ
ղլուելի զրպարտութիւն մը» հրատարակել
համարձակող (?) խմբագիր, Ռուսչուքի ազգ.

վարժարաններու հարցաքննութեանց առթիւ
աշակերտաց հարցուելիքներու մեզ զրկուած
մէկ ցուցակը հրատարակած Ըլլալնուս հա-
մար, ու կը յայտարարէր նաեւ թէ ուսուցչ-
չական մարմինը գատարանի դիմած է, չենք
գիտեր իր. . . ո՞ր չի կորսնցուցած իրաւուն-
քը պաշտպանելու համար:

Անշուշտ մեզի հետ շատեր ալ կը զար-
մանան թէ, Ռուսչուքի այդ անգոյն մարմինը
տակաւին ճիգեր կընէ ինքզինքը տրդարացը-
նելու, յայտարարութիւններ հրատարակելու,
առանց կարգալու իր մասին Պուլկարահայոս
մուլին առօրեայ հրատարակութիւնները, ո-
րոնք պատիւ չեն բերեր ոչ իրեն եւ ոչ իր
մեծապատիւ տնօրէնին: Մենք մեր պարտա-
կանութիւնը կատարած ենք եւ կը կատարենք
միշտ, առանց սպառնալիքներու ականջ կա-
խելու, պէտք եղածին պէս գնահատելով մեր
դիմացը գտնուող պոռոտախօս սնամէջ գան-
կերու արտագրութիւնները:

Կը զարմանանք նաեւ որ այդ խմբակը ա-
ռանց իր անկումը զգալու, տակաւին կը հա-
մարձակի հրապարակ գալ. եթէ մեզի չափ
ինքնաճանաչութեան եւ արժանապատուու-
թեան ոգի ունենար, արդէն մինչեւ ցարդ տե-
ղի տալու էր այն միահամուռ բողոքներուն,
որոնց արձագանքն է այսօր Պուլկարահայոս
բողջ մամուլը:

Մենք ընդհանուրին հետ կառաջարկենք
որ երեսի աղտ ուսուցիչներու այդ խմբա-
կը, այլ ևս բաւ համարելով նուիրական յար-
կի մը շուրջը ըրած շահատակութիւնները,
հեռանալ, բանի որ այսօր հաստատուած է որ
իր պետն իսկ բոլորովին անկարող է վարժարան
կառավարելու. որովհետեւ այն մարդը որ ա-
նոր ասոր հետ միշտ կ'ախ, ծեծ, հայհոյանք
ու դատարան կը խառնէ կրթական գործին
մէջ, իր առջեւ բացարձակապէս փակուած գրո-
նելու է դպրոցական պաշտօնէութեան դռ-
ները թէ մեր ազգային կազմական կանոնադ-
րով և թէ տեղական կառավարութեան օրէն-
քով որ գրեթէ կը պարուրուենակէ հետեւեալը.

«Կրթական օրինաց տրամադրութեան ցը
համեմատ, վարժարանական ո և է պաշտօն-
եայ երբ մէկէ աւելի անգամներ կը կսուի եւ

դատի կենթարկուի, այլ եւս չէ՛ կարող պաշտօնավարել կրթական հաստատութեանց մէջ ր :

Բոժոժիկ—Ըսել է որ մարդ մը չպիտի կրնայ տնտես անգամ ըլլալ վարժարանի մէջ, որ ան աս կը ծնծէ, գլուխ կը պատռէ, թեւ կը կոտրէ, քիթ բերան կ'աճիւնէ, թէեւ իր խոշոր խելապատակը խել մը «ուժիւն» րով սալաւնուի կոխած ըլլայ :

(Անհամբեր սպասելով բացուելիք (???) դատին, այսօր այսչափ :



Բ. ՅՈՒՑԱԿ

Որոշեալ հարցումնք Քրանսերենի,
Գ. Նախկին. տղայոց

Պարոնայք

Մեծատուր Մարկոսեան Լը լիվւ
Մկրտիչ Պապատաղեան Լա լիպեթէ
" Խորասանճեան Լ'ապի տը Ռոժ
Պետրոս Գարուծիւնեան Լը Սու բէռտիւ
Գրիգոր Պէյլեան Լէ գիւնֆօրթիւն
տը մէտոռ
Կարապետ Պղտիկեան Լ'ափառ է սօն սինը
Արմենակ Գովհանէսեան Տը մօնտ է Ժէնը
վիէվ
Գովհանէս Սարգիսեան Տէօ Սէօռ
ՊԻՇՄԻ

Հետեւեալ խօսակցութիւնն ալ տեղի ունեցած է երկու ուսուցիչներու միջեւ, որոնք այցելութեան կերթային Պ Տնօրէնին, յուլի 21—22 իրիկունը ուշ ժամանակ, գրեթէ ժամը 9ին միջոցները .

Ա. — Պարոն Ը. որմէ՞ կը յուսաք որ գրած ըլլայ ասիկայ .

Ը. — Չեմ գիտեր եղբայր. ո՞վ կրնայ գրած ըլլալ ասանկ բան մը .

Ա. — Քեզի բան մը ըսե՞մ, ասիկա բարձրագոյն կարգի տղոց գործը ըլլալու է. որովհետեւ անոնցմէ զատ մէկը չէր գիտեր այս գործը .

Ը. — Այո՛, այո՛, շատ ճիշդ գտաք, անոնցմէ ըլլալու է, որովհետեւ ստորագրութիւն ալ չէր դրուած ր :

Բոժ. — Աստուած խելք տայ :

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ

ԱՆՏՈՆԻԿԸ

Տասնեւհինգ տարեկան եղած ժամանակ ընդհանրապէս վարժարան կերթայ. մեծ փափագ ունի ֆրանսերէն սովորելու . իւր մայրենի ու տեղական լեզուին բնաւ կարեւորութիւն չի տար, Ուրվհետեւ, հայրը ըսած է որ «եթէ ֆրանսերէն նամակ մը գրել սորվիս, բաւական է ր :

Շատ խոնարհ է Անտոնիկը ու շատ կը փափագի ստակ շահելով մեծ մարդ ըլլալու, սակայն իր ամենամեծ իղձը գրագէտ ըլլալ է : Տանընթեք տարեկան եղած ատեն վարժարանը կը թողու, ըստ ինքեան ամեն բան սորված է, բայց բանէ մը խաւար չունի . ֆրանսերէն Պուլկայերէն ու Հայերէն գիտէ, բոլորն ալ կիսկատար, վաճառականի մը բով կը մտնէ, կը սկսի աշխատիլ . իրիկունները ուշ ատեն կ'արձակուի, որով բարեկամները ամեն ատեն չի կրնար տեսնել : Առաջին ամսագլխուն կ'սպասէ ինքնիրեն ըսելով, «այսբան գործ կը տեսնեմ, հարկաւ ամսական մը պիտի տան ր : Եւ երկու ամիս կանցնի, ստակ չառնէր, ամեն իրիկուն ընդհանրապէս իւր դպրոցական ընկերներով կը պտտի ու անոնց կը պատմէ իւր օրուան մէջ տեսած գործերը . ամենքն ալ ուշագրութեամբ մտիկ կ'ընեն իւրեն : Անպատիւ տեղեր բնաւ չի յաճախեր, յաճախողներն ալ կայպանէ, որովհետեւ ինք կարող չէ անոնց հետեւելու . . . ստակ չռնենալուն պատճառաւ :

Ժամանակը անցած է : Վարպետը այլեւս սկսած է իրեն ամսական վճարել . Անտոնիկ իր գործին լաւ կը նայի ու անձկութեամբ ամսուն օրերը կը համրէ . հիմա իր զբօսանքները տարբեր են, իրիկունները պտտելու կենէ, իրմէ մեծ աւարիքով զբօսասէր բարեկամներ գտած է . ալ իւր դպրոցական ընկերներուն հետ խօսելու չի զիջանիր, որովհետեւ անոնց գրպանները ստակ չի գտնուիր. իսկ ինք հարուստ է, կարող է ամեն տեղ երթալ, ի մի բան, իրեն համար այլեւս ամօթ բան չի կայ . ընտանեկան շրջանակներու մէջ ամենքն ալ կը համակրին իրեն, ալ Անտոնիկ չեն կոչեր զինքը, այլ՝ միւսիւ Անտոնիկ, զոր կուղէ միշտ լսել փառասիրութեամբ :

ՖԷՊԻՍ

ԾԽԱԽՈՏԻՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ

Ծխախոտի հակառակորդներուն ապացոյցները շատ մօտիկ ըրած ենք, քէչ մ'ալ պաշտպանները մօտիկ ընենք, որ կ'ուրանան անոր չարիքները:

Ամերիկացի վիրաբոյժ մը վերջերս կատարելով անդամահանութիւնը մարդասպանի մը որ բանտին մէջ օրը 40 սիկառ կը ծխէր, տեսաւ թէ շարագործին հագագը բորբոքման ու է հետք չէր ցուցներ: Նոյն իսկ խել մը գիտուններ սա հաւատքը ունին թէ ծխախոտը՝ հեռի ի բաց վանելէ, պէտք է նկատել բուժական միջոց մը եւ մարդկութեան բարիք մը: 2^է մի որ նաւաղներն ազատ են ընդադարձութենէ (սգօրպիւ) շնորհիւ ծխախոտի թերթիկներուն զոր անընդհատ կը ծամեն իրենց ակռաներուն մէջ. չէ՞ մի որ ծրխողներն աւելի կ'դիմագրեն համաճարակներու դէմ. ասիկայ անվիճելի է: Ստոյգ փորձերով ցուցուած են թէ ծխախոտն իր մէջ ընդհանրապէս չունի վնասակար բոցերներ. մանաւորապէս զերծ է ժանտատենդի, անխախտի եւ թորատապի մանրէներէն, ինչպէս նաեւ կարգ մը միկրօբներէ որք նորմալ վիճակի մէջ կ'աճին ամենէն... բանաստեղծական բերաններու մէջ իսկ: Ծխախոտը, այդ մեծ զրպարտեալը, իր պաշտպաններուն խօսքին նայելով նոյն իսկ բուժիչ մ'է թորախոտին եւ հնդախոտին: Համպուրկի մէջ պատահած հնդախոտին ժամանակ Տքթ. Վէնեկ ծրխախոտի գործարանի գործաւորներուն մէջ մէկ հիւանդ իսկ չէ գիտած:

Ծխախոտի հակառակորդներն ոչ նուազ իբր յանցաւոր կը գատապարտեն նաեւ սիկառի թուղթն, որուն ի պատասխանի մաթեմատիկոս ծիողներն յաղթանակաւ հետեւեալ թուանշանները կ'ցուցնեն: Օրը 25 սիկառ ծխողն 0,796 կրամ ծանրութեամբ թուղթ կ'սպառէ. այդքան թղթէն առաջ կուգայ 0,007 կրամ մոխիր, որ իր մէջ կ'պարունակէ 0,00012 կրամ պղնձի եւ կապարի որսիտ: Ենթադրելով որ այդ թուանշանը փոշի-

ներն հետցհետէ մտնեն ծխողին թոքերը փխաւ երկու քառուան մէջ, հաշիւ մէկ կրամ թոյն շնչած պիտի ըլլայ:

Եղբակացութիւն: Ծխախոտի չափաւոր գործածութիւնն եթէ ոչ հիւանդներու գէթ առողջներու համար, վնասակար չէ: Անքի առջեւ բերենք շատ մը բժիշկներ, որոնք ծրխախոտի դէմ կը վարդապետեն եւ սակայն իրենք կը մոռնան ամենէն մեծ դեղադրին անձին օրինակ ԸԼԼՈՒԸ, ու միշտ կը ծխեն:

Պ. Մ.

Էյժենի աշտարակին նոր ներկը, դեղին, վաթսուն գործաւորներ աւարտեցին երկու ամիս աշխատելէ ետքը: Յիսուն թոնօներէ ըսպառեցաւ: Այդ ներկը վերջնական չէ. սեպտեմբերին երկրորդ անգամ պիտի ներկուի, աւելի ոսկեգոյն:

Հսկայ Տակաւոր—Նանսիի մէջ տակաւագործներու ընկերութիւն մը 1900ի բարիքի արուեստահանգէսին համար հսկայ տակաւ մը շինած է որ կրնայ 4200 հարկարալիտր հեղուկ պարունակել: Ատոր ծանրութիւնն է 300.000 լիպրա եւ բարձրութիւնը իննուկէս մէթր: Հարկար քառասուն հոգի հանգիստ կրնան նստիլ այդ տակաւին մէջ:

Համալսարանէն Պալատը. — Աւելորդ է ըսել թէ այս ալ տարօրինակութեանց երկիրը, Ամերիկայի մէջ տեղի կ'ունենայ: Չին-չինթիի մեթատականերու եկեղեցիին մէջ բարեգործական պաղար մը հաստատուած էր, բայց սպասուած յաջողութիւնը չէր ունենար: Վաճառման գործը ստանձնող տիկիները գաղափար մը յղացան, այն է պաղարը այցելող այրերուն համարյոք տալ, վճարումի մը փոխարէն: Սակացոյց մըն ալ որոշեցին սապէս. — աղջիկներուն համար մէկ ֆր. ամուսնուցած կիներուն՝ 1 ֆր. 50 եւ այրի կիներուն՝ 2 ֆր. 50: Պայման դրուեցաւ որ համարյոքի ատեն այրերուն աչքերը թաշկինակով մը ծածկուի, բայց համբուրելէ վերջը իրաւունք ունենան տեսնել այն այտերը

որոնց դպրոցած էին իրենց շրթունքը: Այս որոշումը բաւական յաջող արդիւնք ունեցաւ և պապարին սնտուկը սկսաւ լեզուել: Այցելողներէն մէկը, Պ. Ճոն Ռէյնոլտս, որ շատ հաճոյք դպրոցած էր այս առևտուրէն, երեք անգամ կրկնեց և երբ աչքին կապը քակեցին, գէմը տեսաւ. . . իր կինը զոր համբուրելու համար 7 ու կէս ֆր. վճարած էր: Ռէյնոլտս պահանջեց որ դրամը ետ տան: բայց մերժեցին: Մարդը բարկացաւ, պոռաց, կանչեց և անշափ աղմուկ յարոյց որ ոստիկանները զինքը բանտ տարին:

Անգլիացիի ա՛յ ուրիշ հոգ չունիմ. —
Պարզ մը Անգլիացիք տարօրինակ աղերսագիր մը կ'պատրաստեն խորհրդարանին մատուցանելու համար: Այս խելացիներ կ'պահանջեն որ դպրոցներուն մէջ երկրիս կլարուածն վերայ բան չսովորեցնեն, որովհետեւ երկիրը կըլոր չէ եղեր. Գալիլէոս և ուրիշներ սխալ խորհեր են: Նոյն իսկ ամբարշտութիւն է եղեր սովորեցնել թէ երկիրը կըլոր է: (Անգլիացիք իրաւունք ունին. իրենց ոսկիները միայն կըլոր են. . .):

ՆԱԽԱՊԱԾԱՐ ՄԱԿԱՆ

«Աճառն ինչ օգուտ սեին,
Յորդորն ինչ օգուտ խեին»:

Անցեալ օր * * * թաղի մէջ 80նոց կին մը կը մեռնի: Նոյն փողոցին մէջ բնակող մէկ քանի գաղթական հայ կիներ պառաւին մահուան լուրը առնելուն պէս՝ մեծ իրարանցումի մը մէջ կիշնան:

— Բա Պէղիկ, սալ խապար մը առիք. չէրէ անցած շաբթու ալ իրեք հեղ մեռաւ ըսին ամա՛ ետքէն սուտ ելաւ:

— Չէ՛, աս հեղու իրաւ մեռեր է, կարգած թոռներուն վախճասունին ծանր տահա չի կըրեցաւ:

— Ամա հէքիմը դացած վախթը քանի մը օրէն արթըխ մարդու կարօտ չեա ըլլար ըսաւ նէ՛ իրաւ է եղեր:

— Հիմա ադ լախըւտըները ձգեցէք տէ ինչ պիտի ընենք նէ՛ ընենք.

— Հայտէ ամենքնիդ ալ պզտիկ լաթի կտորուանք եախոտ մէյմէկ քիչ բամպակ առէք տէ՛ վո՛ւր տեղերնիդ կը ցաւի նէ՛ հոն քսեցէք բերէք քի տանինք ինչ ընելու ենք նէ ընենք:

Տանը մէջ կօչկակարութեամբ զբաղող պարօն Տօնիկ — կէնէ նէ՛ օլույօրսընըլ քա՛.

— Հիչ, քեզի կէօրէ պան չէ.

— Էյ պու պէզ բարչաւընը ալսն նէրէ՛յէ կիտէյօր.

— Հիմա հիչ վախթի չունիմ քեզի մէրամ հասկցնելու. մեռելը կելլան կը տանին տէ՛ աստար ատենուան արզունիս փորերնիս կը մնայ:

— Պէ՛ ճանըմ, իչ նէ՛ տիր. սէօյլէին պազալըմ.

— Տօնիկ աղա, հիմա նաֆիլէ սիրտը մի՛ հատցուններ. վրադ բարի, էյէր մէկտեղդ սըղը մը բան մը ունիս նէ՛ լաթի կտորով մը սրբէ տէ մեզի տուր քի ընելիքնիս ընենք:

— Ընելիքնիդ ինչ է քի.

— Մի՛ հարցուններ հիմա.

— Թօհաֆ չէյ. բաչալըրա՞ բօստասը մը գալգաճադ.

— Հա, բաչալըրա բօստասը գալգաճադ. դուն տահա մի՛ հաւտար տէ քաշքշէ. պօշ լախըւտը չուզեր:

— Կնիկ, օտքիս նասըրը բէք կը ցաւի կոր ամա. . .

— Թամամ իշթէ, սա բամբակին կտորը հոն քսէ տէ տուր քի առնենք տանինք:

— Պէ՛ ճանըմ, ո՛ւր պիտի տանիք. ինչ պիտի ընէք, իչ նէ՛ տիր, աղնաեալըմ:

— Վույ բէք խատընօւան մարդ ես եզեր ճանըմ Տօնիկ աղա. իշթէ աս

սրբուած լաթերը պզտիկ չըլան մը ըրած՝ կամացուկ մը պիտի տանինք մեռնող պառաւին պատանքին առաւելիս թխմենք քի՛ցաւերնիս ցեցերնիս հետը առնէ երթայ։

— Փրկիչը պոյաւամիշ ըրեր են քա՛ն։ Աստուած շատ քաջել չի տայ. ամօթ է, տեղերնիդ նստեցէք. լսողը ի՛նչ կըսէ, վրանիդ կը խնդան։

— Ի՞նչը պիտի խնդան. ամեն վախիթ ասանկ սէքսէննոց պառաւ կնիկ չի մեռնիր։

— Վա՛յ, թըլըսմը սէքսէննոցի՛ն վրայ է։

— Հապա ի՛նչ գիտցար, ամեն մեռելի չըլլար. քա աղջիկ, ի՛նչ կայներ իս մտիկ կընես. հայտէ դուն ալ օտքդ ծառքդ վրայ ու քորջով մը սրբէ բեր քի՛ կապուած խըսմէթդ քակուի։

— Կնի՛կ, ձեզի համար ալ խելք ունի ըսողը թող զինճրներով կապուի։

— Աման ճանըմ՝ Տօնիկ աղա, արեւդ համար շատ լախըտը չուզեր. դուն կուր կը փնտռես կոր ամա՛նս հիմա վախիթ չունիմ։ Հայտէ քա էպրոս, քովի օտաի քերածի կէնճին ալ իմացուր քի չօճուխին հին վարտիքներուն քէնարէն պզտիկ սըլըրմա մը կտրէ տէ տայ, մէջքը բէք թուլ է կըսէր կոր, ան ալ կառնէ կը տանի։

Ձերկարենք, հակառակ Տօնիկ աղայի դիտողութիւններուն, նախապաշարեալներուն քուրջերու պզտիկ ծրարը մըլցըլսենց Մարթա տուտուին կը յանձնուի, որպէս զի մեռելին տունը երթայ դադաղին քովը նստի, քիչ մը ատեն լայ ու յարմար առիթ մը գտնելով ննջեցեալին ծոցը թխմէ, երեք անգամ լսելով. «Հետդ տար ցաւերնիս, ապառէ՛ հոգինիս»։

Տօնիկ աղան — Պէն սիզէ պիր շէյ սէօյլէյի՛մ մի, օ զավալլը իհիթիյար օղին երեքիւնիզի կէօթիւրէմէզ, քէնտի-

նիզ կէօթիւրսէնիզ տահա էյի օլմա՛ղ մը, հէմ տաղըգասընտա բէրիբաք օլուրսընը։

— Եօգ, իւաղըմ տէյիլ, քուկին խրատդ քեզի. հի՛մ ինչ ըսես նէ խըզմիշ չպիտի ըլլանք, հասկցար. մենք մեր գիտցածէն աշխարհք մէկգի դայ նէ՛ վաղ չենք անցնիր։

— Ա, անկ է, չիւնքի սեին սապօն, խենգին խրատ ֆայտա չընեի։



Տօքթօ՛ւ, մեր տիկինին համար ծով մտնալ պատուիրեցիք ամա՛ օգուտ մը չի տեսնար կոր,

— Ինչո՞ւ, անհանգստութիւն մը կը շղայ։

— Անհագստութիւն զգացած չունի, ֆախաթ, ...

— Ուրեմն ինչէն՞ գիտես օգուտ մը չի տեսնելը,

— Որովհետեւ ծով մտնելու համար հանուելուն պէս՝ նիհար կերեւայ կոր։

— Ուրեմն... թող չի հանուած ծով մտնայ։

— Միւսիւ Մէնճէն, եէնի նիշանլըմը զաթընըզա բրէզանթէ խէրիմ։

— Քէնտիմի կայէթ մէսուտ աստ խտէրիմ մատմաղէլ քի, սիզլէրի՛ տօսթում միւսիւ ֆօֆթօֆուն վասըթասըլա թանընօրմ. հաթթա զանն խտէրսէմ

սիլլերի էվվէլինոէն թանըեաճաճմ. կալիպա պիլիմ պէօյիւք պիրատէրէ . .

— Էվվէթ, սիլլին պէօյիւք պիրատէրէ նիշանլանաճաճմըլ տա, սինճէ օլան ֆարգտան տօլայը կէրի գալմըլ:

— Ձաթընըլ չօգ էյի էթմիշտինիլ քի պու կիպի պօշ ֆարգլարա էհ'մմի-յէթ վէրմէ'իշտինիլ:

— Ա, խայըր, պէնտէնիլ նաբօլէօն ֆարգընտա' պաշգա' մատմազէլտէ ֆարգ արամատըմ:

ՀՅՈՒԱԳՐԱԿԱՆ

Աժանս բոժոժիկ եւ Ընկ.

Լահէյ.

Խաղաղութեան վեհաժողովը միաձայն հաւանութեամբ իր վերջնական վճիռը արձակեց.

«Աշխարհի խաղաղութիւնը՝ թնդանօղին ծայրն է»:

(Եւ փառք յաւիտեանս ամէն):

Մրդաստան. Յունիս 28

Մրդեղինաց վեհաժողովը յետ երկար վիճաբանութեան, հետեւեալ բանաձեւը քուէարկեց.

«Ժողովս կընդունի մառաշին քօխումի երթալէն պատճառաբանեալ հրաժարականը և կանցնի օրակարգին»:

Նոյն Յունիս 30

Այս առաւօտ քաղաքի հրապարակը հասած մրգաբարձ կառքեր վարունգին առատութիւնը կը շատադուին: Նախարարական տաղնապ մը մօտալուտ կերևի: Պարտիզպանական քեօշէ պոռնախակմբոց մէջ այժմէն սա կարծիքը կայ թէ՛ Պ. վարունգ պիտի յաջուի Յունիս ամսոյ զովացուցապետութեան պաշտօնը ձեռք անցնել:

Յունիս 1

Այս առաւօտ պարտիզպանաց պետը առ ինքն Լոշեց Պ. Ծիրանը, ամառնային մրգական գործունեայ նախարարութիւն մը կազմելու համար.

Նոր նախարարութիւնը կազմուեցաւ հետեւեալ կերպով.

Պ. Ծիրան, հարուստ ստամոքսի գործոց պաշտօնեայ.

Պարոնայք Սալոր և վայրի տանձ հասարակաց ստամոքսի պաշտօնեայ.

Պարոն Բալ, մեծ արարողապետ.

Պարոն տանձ տ'Ահէ, առողջապահական նախագահ.

Պարոն վաղունգ, պետ սալաթայից:

Սոյն ընտրութենէ ետքը խորհրդարանը իր նիստերը գաղութեցուց մինչև օգոստոս 15:

Սիլիսդրէ

Չորս թիւ հրատարակուելէ ետքը դադարեալ թերթի մը խմբագիրը հոս եկաւ ու . . . քսակներու հաւասարութիւնը պաշտպանող ատենախօսութեամբ նոր հանգանակութիւն մը ըրաւ թերթը վերստին . . . չի հրատարակելու համար:

Ռուսնուք

Միաձայն հաւանութեամբ որոշուեցաւ շնորհքով աւուք մը ընել զպրոցին փոշիներն ու աղտերը մաքրելու համար:

Ուլիցա Կուրկուլեաթա

Օրիորդ մէ իր նշանածին առաջարկեց մօրուքը ածիլել տալ, հակառակ պարագային նշանը ետ ընել սպառնալով: Երիտասարդը անմիջապէս սափրիչին վաղեց ու մօրուքը վար առաւ:

Բարիդ


Անցեալ շաբթու Դանուբի մէջ պատահած մեծ փոթորիկէն նպարավաճառ պօնպօթի մը ժայռի մը զարնուելով՝ վերաւորեալ գլուխը խաղաճաք ընելու համար ուղուած 2 պալեա թիւթիկ, 3 տակառ զիւթ, 2 տակառ գաքրակ և 12 տուզինա խաղաճաքճիները ճեպընթաց կախախումբով ճամբայ հանուեցան դէպի Ռուսնուք:

ՁեկոՅՅ — Դանքարին շարունակութիւնը յաջորդ թերթով:

Մ. 2. ԹՈՐՈՎԱՄՈՒՆՔ

Գողտրիկ բանաստեղծութեանց սոյն հատորիկը կը վաճառի ի գին 25 սանդիմ, և Զորպահանէի տնիքի գրատունը, վառնա:

ԸՆԴԱՐՁԱԿ



ՈՐ ԲՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

Կամ Հաւաքածոյ

Հին եւ նոր Ազգ. երգերու

208 էջերէ բաղկացած սոյն երգարանը կը ծախուի վառնա Ա. Զորպահանէի գրատունը: Գինն է 2 ֆր. թղթատորի ծախքը գըրատան վրայ ըլլալով: Իրամի փոխարէն կ'ընդունուի Պուլկարական Գաղ. Գերմ. Անգլ. և Թրքական չի գործածուած նամակագրոյններ:

6

Ն Ե Ր Կ Ա Ր Ա Ր Ը

Կամ

ՄԵՂԲ և ԱՊԱՇԱԽ

Պոլսական կեանքէ բաղուած

Թատերախաղ 5 արար և 1 պատկեր.

Գրեց Տիրան Գ. Փափաղեան

Գին 60 սանթիմ: Դիմել խմբագրութեան:



ԳՈՒՇԱԿ

ԱՊԱԳԱՅԻ

Կամ Զուարճալի Բաղդադցոյ
Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզբօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մէկ ֆրանքի, թղթատորի ծախքով Դիմել խմբագրութեան:

ՄԵՆՎ ԿԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՍՈՖԻԱ ՔԱՂԱՔԻ



ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ

Երաշխատուեալ

Ա. ՊԱՐԳԵԻՆ Է 500.000 ՖՐ. ՈՍԿԻ

50.000 տոմսեր հրապարակ հանուած են, որոնց 25.000ը պիտի շահին հետեւեալ կարգաւ.

1899 Յունիս	9ին	1500	Թիւեր
" Յուլիս	7	1500	"
" Օգոստ.	4-5	2000	"
" Սեպտ.	3-4	"	"
" "	23-24	"	"
" Հոկտ.	13-3նոյ	16.000	"

Գիներն են ՈՍԿԻ ՖՐ.	Մէկ թերթ.	Քառորդ	Կէս	Ս. Այլով
	1, 25 ֆ.	2, 50 ֆ.	5 ֆ.	10 ֆ.
	2	4	8	16
	2, 50	5	10	20
	3, 50	7	14	28
	3	6	12	24
	2, 15	4, 30	8, 60	17, 20
	14, 40	28, 80	57, 60	115, 20
				Ա. Այլով
				Ա. Այլով
				Բ. Գ.
				Գ. Գ.
				Ե. Գ.
				Զ. Գ.

Գինը և մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել Սեղանաւոր Տիր. ՍԱՐԳԻՍ ԳԱՅՐԻԷԼԵԱՆ, միակ գլխաւոր գործակալ տոյն պիճակահանութեան, վառնա, Մոսկովա:

Երջակայ քաղաքներէն եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

Մ. Ա. կարգէն չի սկսող մը եթէ Բ. Գ. Ե. կամ Զ. կարգերէն ուղէ, պարտաւոր է առջի կարգերուն փոխարէն ալ վճարել:

ОТГОВОРНИКЪ М. СКОНОВЪ
Печанница Взаимность — "Варна."